

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲՅՄԲԱԿԱՆՔ

● Կիր. 6 փետր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի վերնամարտան մէջ. ժամարարն էր Նոյ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան:

● Ուր. 11 փետր. — Ի Ս. Յակոբ պաշտօնած վազան նախատեսակին նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան:

● Եր. 12 փետր. — Տօն Ս. Ասրգիսի զօրավարին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգիսի մատրան մէջ: ժամարարն էր Նոյ. Տ. Վարսեման Վրդ. Գապարանեան: Ապա, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան նախագահեց Ս. Աթոռոյ մեծ բարեկամ և բարերար Վսեմ. Գալուստ Կրկնականի ծնողաց հոգիներուն ի հանդիս կատարուող հանդիսաւոր հանգստեան կարգին: Մայր Տաճարի ատեանին մէջ ամբողջ Միաբանութեան և ժողովուրդի մասնակցութեամբ տեղի ունեցաւ հոգեբարաւ և սրտատուջ հոգեհանգրտեան պաշտամունքը:

● Կիր. 13 փետր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ: Պատարագեց և քարոզեց Անթիլիսիոյ Միաբանութեան հիւրաբար քաղաքս գանուող Նոյ. Տ. Շահէ Վրդ. Անէմեան, ընտրան ունեւարով օրուան ծառայութեանը: Սր ցայ առ իս՝ ո՛չ քաղցիցէ և որ հաւատայ յիս՝ ո՛չ երբեք ծարաւեացի (Յովհ. 2. 35): Նոյ. Տ. Հայրսուրբը քաղաքեց կրօնքին և զիտութեան առանձին տեղերը և զերբերը մարդկային կեանքին մէջ:

● Կիր. 20 փետր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի վերնամարտան մէջ. ժամարարն էր Նոյ. Տ. Վաղզվէն Արեղայ Գրգրըսեան:

● Դշ. 23 փետր. — Վարդանանց նախատեսակը մեծ հանդիսաւորութեամբ պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսակցեան էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան:

● Եշ. 24 փետր. — Տօն Ս. Վարդանանց 1036 վկայիցն (Տօն ազգային): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը Մայր Տաճարին մէջ մատուցեց՝ ըստ սովորութեան, ժոնգ. Վարժարանի և Ընծայարանի Տեսուչը՝ Նոյ. Տ. Հայկազուն Վրդ. Արքայանեան և քարոզեց, ընտրան ունեւարով եղիւ: Է՛ն Վան իմացեալ անմահութիւն է: յարգութեամբ ներկաներուն սիրելի իրենց Մայրնի՛ն եկի՛ զեցին ու զօրգորալ մեր ազգային արժէքներուն վրայ, հաւատքով պաշտպանուած և զօրացած, Ըլլալու համար արժանաւոր յարգները Վարդանանց սերունդին: Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան նախագահեց քօման:

զակ հայ նահատակաց հոգիներուն համար կատարուած հանդիսաւոր հոգեհանդիսուն:

● Ուր. 25 փետր. — Առաւօտեան ժամերգութեանէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի զիխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ասորոց Ս. Մարկոս Աւետարանչի կեկեղեցին, ուր Ս. Պատարազը մատուց և քարոզեց Նոյ. Տ. Պարզե Վրդ. Վրթանէսեան, «Երանի ուղորձածաց զի նորա ողորմութիւն ցացին» ընտրանով (Մատթ. Ե. 7): Ապա Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորոց Նոյ. Տեսչէն:

● Եր. 26 փետր. — Ըստ սովորութեան, Երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Մայր Տաճարի զիխաւոր խորաններն ու սրբանկարները վարագուրուեցան. ապա, Ասպ խորանինը կըրկին բացուելով կատարուեցան Տեսուչը գտնաւոր նախատեսակն ու «Անդատանքը, մեծ վայելուչ հանդիսաւորութեամբ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Արքեպս. Մանասեանի:

— Իրիկուան ժամը 7ին, Մայր Տաճարին մէջ կատարուեցան հանդիսաւոր Եկեղեցէ և Լակուսի, զարմեալ նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Արքեպիսկոպոսի:

— Գիշերասկզբին, Մայրավանքի շատ մը թաղերուն մէջ կը վառէր Տեսուչը գտնաւոր ատանդական կրակը, որուն շուրջ ժողովուրդը սարքած էր խրախճանական տեսարաններ:

● Կիր. 27 փետր. — Ա. Քառասնորդաց: Բուն Բարեկենդան և Տեառնըրգաւաջ: Հանդիսաւոր Ս. Պատարազը Մայր Տաճարին մէջ մատուց Գեր. Տ. Սուրէն Արքեպս. Մանասեան:

ՊՍԵՏՈՆԱԿԱՆՔ

● Գշ. 1 փետր. — Առաւօտուն, Նոյ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան վանական զործերով մեկնեցաւ Իսրայէլ, Վերադարձաւ Կիր. 6. 2. 55 Կ. Վ.:

● Եր. 5 փետր. — Երեկոյեան, օղային գծով Պէյրութէն Ս. Աթոռ ժամանեց Ս. Աթոռոյս բարեկամ և ծանօթ նարտարայտա Տէր Մ. Ալթունեան Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան զործերու առնչութեամբ և մեկնեցաւ Ուր. 11 փետր. ի Կէսօրէ ետք:

● Դշ. 9 փետր. — Երեկոյեան, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, որ տաւ օրեր առաջ մեկնած էր Պէյրութ, վերադարձաւ Ս. Աթոռ: Իրեն կ'ընկեանար Մեծի Տանն Կիլիկոյն Աթոռին երկտասարկ միաբաններէ՝ Դիւանապետ Նոյ. Տ. Շահէ Վրդ. Անէմեան: Նոյ. Տ. Հայրը մեկնեցաւ Գշ. 15 փետրուարի առաւօտուն:

● Եր. 12 փետր. — Կէսօրէ ետք, տեղւոյս Centre Cultureի կողմէ, Ֆրէնկերու զպրօֆին մէջ արուած երեք արժապատկեաներուն ներկայացման ներկայ եղաւ Նոյ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան:

Ս. ՎԱՐԳԱՆԱՆԵՑ ՏՕՆԱԿԱՍՏԱՆԻՔԻ ԳԻՒՆԵՐ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍԷՋ

Պողոսյանի ֆառֆախան սագնապեն եւ երաւաղի մի աղեկն առաջ, Ս. Արուսյա Ժառանգաւորաց վարժարանի սաները ամեն տարի, Ս. Վարդանանց տօնին, կը ներկայացնէին Վարդանանց բաժնետիր մը: Ներկայացում եմ Սմբատ Բիւրաշի Արշակունցի, Յ. Օսականի եւ Յ. Բաղդասարի եւ ուրիշներ:

Այս տարի վարժարանիս եւ բնակարաններս չունիմ: Տեսուչ՝ Հայկազուն Վրդ. Աբրահամյանի նախաձեռնութեամբ եւ մեծ պատասխանութեամբ ներկայացուցաւ եւ Վարդանանց ՎԱՐԳԱՆԱՆԵՑը. Վարդանանց գոյամասի 1500 ամեակին առիթը գրուած վեց տարածքով մը:

Յիշեալ բաժնետիրը առաջին անգամ ըլլալով կը բնագործէր երաւաղի մէջ եւ

● Կիր. 13 Փետր. — Կէտարէ ետք, քաղաքիս Ազ-Չահրա պանդոկին մէջ կառավարութեան կողմէ նախագահութիւն մը տեղի ունեցաւ. ի պատիւ մասնագէտ նարտաբազէտ Mr. C. T. Woolleyի, որ յապապէս կ'ուսանէր ժամանակէ Ս. Յարութեան Տանարի նորոգութեան գործերու առնչութեամբ. Թէյասեղանին ներկայ գտնուեցաւ Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամյանի, Տիրաբ. Կարպիս Հիւրիւմանի եւ Կարապետ Անդրէասեանի:

● Դչ. 16 Փետր. — Առաստառն, Arab Airways ընկերութեան Տնօրէնը այցելեց Պատրիարքարան եւ ընդունուեցաւ Տեղապահ Սրբազանէն: — Կէտարէ ետք, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը օդային գծով մեկնեցաւ Եգիպտոս, իրեն հետ ունենալով Անթիլիասի միաբաններէն Հոգ. Տ. Շահէ Վրդ. Անէմեանը:

● Եչ. 24 Փետր. — Կէտարէ ետք, տեղւոյս Centre Cultureի կողմէ, Ecole Bibliqueի սրահին մէջ, Բեթղէմի Յրանսական հիւանդանոցի վերաբառեալ Dr. Laurent Gasparի կողմէ Միաբանի խորհուրդը նիւթին շուրջ տրուած բանաստեղծութեան ներկայ գտնուեցաւ Բար. Յովսէփ Սրկ. Մամուր:

ժողովուրդի ընտանին որ լեցուցած էր առանք, ախանաճ կ'ըլլար, կենդանի պատկերով, Վարդանանցի խորհուրդին, զոր Սրբազան ներկեակը ինքնատիպ նուանումով եւ բացառիկ գեղեցկութեամբ յաջողած է նուանել:

Բնագործը ու խաղաղութիւնը ընդհանրապէս յաջող էր եւ երբ տեղ-տեղ անխուսափելի նուազումներ ունեցան տղերք, որոնք արուեստագէտ դերասաններ չեն, այսուհանդերձ բաժնետիրը գրական խորունկ ենթահողը, Վարդանանցի ներստական կեցումները, եւ ոգիի վստահութիւնը բուրովին մտացել կուտային փոքր այդ նուազումները:

Յասկապէս յիշատակութեան արժանի է վեցերորդ արտուածը ուր կը պատմուի 35 տարի վերջ տեղի ունեցող գեղեցիկը. Յովնան Մանգակունցի կարողիկոսի եւ Վանան Մամիկոնեանի օրով, երբ Վարդանանց Արաբից Արքան, ազատութիւն կը շնորհէ Հայաստան Աւստրիին եւ Վարդանանց բարոյապէս յարական կը հանդիսանան Պարսից կայսրութեան հօգը իշխանութեան:

Վեցերորդ արտուածին երբ վարագոյրը կը բացուի, կ'երեւի Դուրիսի Մայր Եկեղեցին, տօնական օրերու յատուկ զարդարանով եւ խումբը կ'երգէ Ուր-Է Էր Սուրբ Եկեղեցի շարականը. Մանգակունցի կարողիկոս կ'արտասանէ, ազատութեան եւ խաղաղութեան ծառուի բոլոր ունկնդիրներուն մտմեն անգամ մը եւս սարսուռի հոսանք մը անցնելով: —

Ուրախութիւն հոգիներուն,
ժողովուրդին, երկրին Հայոց:
Մտուե՛ն վերջ, արևունքն վերջ,
Անա ճարհե՛ն
Կը բացուի այցն ազատութեան,
Խաղաղութիւն,
Վրդան հոգին
Հայաստանեայց մեր աւխարհին...:

صدرها - بطريكية الارمن الارثوذكس
المدير والمحرر المسؤول - الآب هايجازون أبراهاميان
طبع في مطبعة دير الارمن - القدس
فبراير ١٩٥٥

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

